Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՄՆԱՃՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2016-2020ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ 2019-20 ՈՒՍՏԱՐՎԱ ԵՎ 2020Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻՑ-ԴԵԿՏԵՄԲԵՐՆ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԻՋԵՎԱՆ 2021

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղն իր գործունեությունն իրականացնում է 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրից բխող կարճաժամկետ պլանի համաձայն՝ կարևորելով կրթության որակը և նրա շարունակական բարելավումը: Մասնաճյուղը հավատարիմ է իր առաքելությանը, և իր գործունեությամբ ձգտում է հասնել ծրագրով նախանշած նպատակներին: Նա իր ուսանողներին առաջարկում է համակողմանի գիտելիք, կարողություններ և հմտություններ ապահովող կրթական ծրագրեր, բարձրակարգ դասախոսական կազմ, ժամանակակից ենթակառուցվածքներ, և իր գործունեության բոլոր բնագավառներում ջգտում է ապահովել որակի անընդհատ բարելավում:

2016-2020թթ. ռազմավարական ծրագրի 25 խնդիրների 141 գործողություններից **22-ը (15.6%-ը)** ամբողջությամբ իրականացվել են մինչև հաշվետու ժամանակահատվածը, մնացած **119** գործողությունները ներառվել են մասնաճյուղի ստորաբաժանումների 2019-20 ուստարվա և 2020-2021 ուստարվա սեպտեմբերից-դեկտեմբերն ընկած ժամանակահատվածի աշխատանքային պլաններում: Այժմ ձեր ուշադրությանն եմ ներկայացնում ծրագրի այդ ժամանակահատվածի կատարողականը:

Ըստ ժամանակացույցի՝ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված 119 գործողություններից **13-ը** (**10.9%-ը**) իրականացվել են, **47**-ը (**39.5%-ը**) որպես պարբերաբար իրականացվող գործողություններ շարունակվել են կատարվել և ձեռք են բերվել որոշակի արդյունքներ, **20-ը** (**16.8%-ը**)՝ իրականացվել է մասամբ: Պլանավորված որոշ գործողությունների շրջանակներում դեռևս անհրաժեշտ քայլեր չեն իրականացվել՝ պայմանավորված մի շարք ներքին և արտաքին պատճառներով (համավարակ, պատերազմ), նաև Մայր բուհում համապատասխան գործընթացների չիրականացման պատճառով: Այսինքն, հաշվետու ժամանակաշրջանում ըստ ռազմավարական ծրագրի մասնաճյուղի կատարողականը կազմել է **67.2%** (նշեմ, որ այս արդյունքի ցածր լինելու վրա հիմնականում ազդել է 9-րդ նպատակի՝ բուհի միջազգայնացման հետ կապված, գործողությունների ցածր կատարողականը՝ 36.4%):

Այժմ անդրադարձ կատարենք հաշվետու ժամանակահատվածում մասնաճյուղի ձեռքբերումներին և բացթողումներին՝ ըստ ռազմավարական ծրագրի 9 նպատակների և նրանց խնդիրների:

Նշեմ, որ մասնաճյուղն իր ստորաբաժանումների նպատակային գործունեության շնորհիվ հաշվետու ժամանակահատվածում ամբողջությամբ, պարբերաբար և մասամբ իրականցրել է **առաջին «Որակյալ կրթություն» նպատակի** պլանավորված 14 գործողությունների **71.4%-ը (10-ը)**:

1. Այս նպատակի **խնդիր 1.1-ի** իրականացման շրջանակներում մասնաճյուղի կարևոր ձեռքբերումը կրթական ծրագրերն են: Նշենք, որ 2019/20 ուստարում մասնա-ճյուղում կրթությունն իրականացվել է դրական կարծիքներով արտաքին փորձաքննու-թյուն անցած և մասնաճյուղի գիտական խորհրդում հաստատված 10 կրթական ծրագրերով: 2 կրթական ծրագրերի փորձաքննությունն ընթացքի մեջ է (**ՌԾ, Խնդիր 1.1**):

2. Նույն խնդրի իրականացման շրջանակներում մասնաճյուղում հաջողությամբ կայացել և արդյունավետ գործում է մասնագիտական կրթության կառավարման **կրթական ծրագրի ղեկավարի** ինստիտուտը: Նրանք իրենց աշխատանքային խմբերով կազմակերպում և իրականացնում են կրթական ծրագրերի պատրաստման, վերանայման և արդյունավետ իրականացման ամբողջ գործընթացը (**ՌԾ, Խնդիր 1.1**):

3. 1-ին նպատակի **1.2.1 գործողության** իրականացման շրջանակներում դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացները բարելավելու, դասախոսական կազմի ման-կավարժական կարողությունները և հմտություններն արդիականացնելու ու զարգացնելու

նպատակով 2019/20 ուստարում նույնիսկ համավարակի պայմաններում ակտիվ գործել է «Երիտասարդ դասախոսների աջակցման և առաջավոր փորձի փոխանցման կենտրոնը» և շարունակվել է «Կրեդիտային համակարգով ԵՊՀ դասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի» 2016-2021թթ. շրջափուլի իրականացումը:

4. Նպատակի **1.2.3 գործողության** իրականացման շրջանակներում կատարվել են մի շարք աշխատանքներ ակնկալվող կրթական վերջնարդյունքների վրա հիմնված գնահատման նոր ձևեր ներդնելու ուղղությամբ: Այդ նպատակով կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժնի կողմից լրամշակվել և քննարկման է ներկայացվել «ԵՊՀ ԻՄ-ում ավարտական աշխատանքների պատրաստ-ման և գնահատման» կարգը, մշակվել և քննարկման են ներկայացվել «ԵՊՀ ԻՄ-ում հեռակա ուսուցման համակարգի մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման» կարգը, «ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական աշխատանքների պատրաստման և գնահատման» կարգն իրենց կից փաստաթղթերով, մշակման փուլում է գտնվում հետազոտական աշխատանքներ կատարելու մեթոդական ուղեցույցը: ՄԿՈԱ բաժնի կողմից մշակվում է առցանց գնահատման ժամանակակից «Կահութ» և «Մենթիմետր» համակարգերում առաջադրանքներ կազմելու և գնահատելու վերաբերյալ մեթոդական ուղեցույցը, ընթացքի մեջ է ուսումնառության Moodle համակարգից օգտվելու դասախոսների և ուսանողների համար մեթոդական ուղեցույցների պատրաստման գործընթացը: Նշված ուղեցույցները կուղարկվեն ամբիոններ քննարկման համար (**ՌԾ, գործ. 1.2.3**):

5. Մասնաճյուղում դեռևս 2013-14 ուստարուց կիրառվում են **դասընթացների փաթեթները**: Հաշվի առնելով ամբիոններում փաթեթների ուսումնասիրությունների արդյունքում հավաքագրված խնդիրները և **1.2.5 գործողության պահանջները** ընթացիկ ուստարում վերանայվել և ամբիոններին է տրամադրվել փաթեթներ վարելու վերաբերյալ նոր մեթոդական ուղեցույցը՝ համեմատաբար թեթևացված պահանջներով և որակի ապահովման մեխանիզմներով (**ՌԾ, գործ. 1.2.5**):

6. 1-ին նպատակի **1.2.6 գործողությամբ** և 8-րդ նպատակի **8.4.1 գործողությամբ** մասնաճյուղում ակադեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմների ներդրման համար ՄԿՈԱ բաժնի կողմից մշակվել է **«էթիկայի կանոնագիրք»**, որում սահմանված են ԵՊՀ ԻՄ վարչական և ակադեմիական աշխատակազմի, ինչպես նաև ուսանողների էթիկական վարքագծի կանոնները, կարգապահական տույժերը և նրանց տրման ընթացակարգը, էթիկայի հանձնաժողովի իրավասությունները և պարտականություն-ները: Կանոնագիրքը քննարկվել է ստորաբաժանումներում, խմբագրվել է իրավախորհրդատուի կողմից և կներկայացվի մասնաճյուղի գիտական խորհրդի հաստատմանը (**ՌԾ, գործ. 1.2.6, 8.4.1**):

7. Ռազմավարական **որակյալ կրթություն**, **որակյալ ծառայություններ** և **արդյունավետ կառավարում** երեք նպատակների մի շարք խնդիրների իրականացման շրջանակներում կարևոր ձեռքբերում էր որակի ներքին գործընթացներին աջակցող ուսանողական խմբի ստեղծումը **(ՌԾ, գործ. 1.3.1),** որը ՄԿՈԱ բաժնի աջակցությամբ վերջին 2 ուսումնական տարիներին աշխատում է բավականին արդյունավետ և ներգրավվել է կրթական ծրագրերի որակի գնահատման գործընթացներում: Խումբը հետամուտ է ուսանողական հարցումների արդյունքներին և ապահովում է հետադարձ կապը ուսանողների հետ: Խմբի աջակցությամբ 2019/20 ուստարում իրականացվել են մի շարք ուսումնասիրություններ, քննարկումներ, հարցումներ և այլն: 2020թ. հունվար-մարտ ամիսներին մասնակցել են մասնաճյուղի ինստիտուցիոնալ ինքնագնահատման զեկույցի պատրաստման գործընթացին:

8. 2020թ. հունվար-մարտ ամիսներին իրականացվել է մասնաճյուղի գործունեության **<u>ինստիտուցիոնալ ինքնագնահատման գործընթացը</u>**։ Ստեղծված խմբերն աշխատել են ըստ չափանիշների և կազմել ինքնագնահատման զեկույցը՝ ապահովելով **1.3.5 գործողության** պահանջը։ Զեկույցը տեղադրվել է մասնաճյուղի պաշտոնական կայքում և ներկայացվել հանրության գնահատականին։ Պլանավորվում է իրականացնել մեկօրյա առցանց փորձագիտական այց ՈԱԱԿ-ի կողմից։

9. Ընթացքի մեջ է դասախոսական կազմի գործունեության բազմագործոն գնահատման չափանիշների մշակումը (**ՌԾ, գործ. 1.3.3**), որը շուտով կրթական բարեփոխում-ների և դասախոսների վերապատրաստման բաժինը կտրամադրի ամբիոններին՝ քննարկման համար։

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժինը մասնաճյուղի գործունեության, Տավուշի մարզի սոցիալ-մշակութային և ուսումնագիտական կյանքում նրա ունեցած դերի և պահանջվածության վերաբերյալ հասարակության կարծիքի ուսումնասիրման համար իր ֆեյսբուքյան էջի միջոցով 2019 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին իրականացրել է հարցում։ Հարցմանը մասնակցած հիմնակա-նում Տավուշի մարզի և այլ մարզերի 32 համայնքների թվով 183 բնակիչների 91%-ը ԵՊՀ ԻՄ-ի ունեցած դերը գնահատել է գերազանց և լավ՝ միջին գնահատականը կազմել է 4.5։

Այժմ ներկայացնեմ **«Որակյալ կրթություն»** նպատակի իրականացման շրջանակներում մասնաճյուղի **բացթողումները**.

1. **<u>Չի վերանայվել</u>** կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման (մոնիթորինգի) և պարբերական վերանայման կարգը (**ՌԾ գործ. 1.3.2**), այն նաև **<u>չի գործադրվել</u>**, սակայն մշտապես կրթական ծրագրերի ղեկավարներն ուսումնամեթոդական վարչության և մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի հետ համագործակցությամբ իրենց աշխատանքային խմբերով յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում վերանայել են կրթական ծրագրերը։
2. **Չի գործադրվել** դասընթացների և կրթական ծրագրերի գնահատման առցանց համակարգը (**ՌԾ 1.3.4.**), որովհետև այն պետք է տրամադրվեր ԵՊՀ-ի կողմից։ Սակայն, մասնաճյուղի ՄԿՈԱ բաժինը վերանայված «Դասընթացների փաթեթի» մեթոդական ուղեցույցի մեջ ներառել է պրոֆեսորադասախոսական կազմի կողմից քննարկված **«Դասընթացի գնահատման հարցաթերթ»-ը,** որպեսզի դասախոսներն իրենք դա կիրառեն իրենց դասընթացների ավարտին։
3. **<u>Չի ներդրվել</u>** վեբ-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգ՝ ուսումնառության ռեսուրսների առցանց մատուցման համար (**ՌԾ, գործ. 1.4.1**), որովհետ ըստ ռազմավարական ծրագրի պահանջի այն պետք է մշակվեր ԵՊՀ-ում և ներդրվեր նաև մասնաճյուղում (չի մշակվել)։ Այս գործողության հետ կապված չի իրականացվել նաև հաջորդ գործողությունը (**ՌԾ, գործ. 1.4.2**), այսինքն չի գրվել ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների մշակման ղեկավար ձեռ-նարկ և համակարգից օգտվելու ուղեցույց։

Ռազմավարական ծրագրի **2-րդ՝ «Արդիական հետազոտություն և նորարարություն» նպատակի** իրականացման շրջանակներում 2019/20 ուստարում մասնաճյուղն ունի մի քանի կարևոր ձեռքբերումներ։ Նշենք, որ մասնաճյուղի հիմնական դասախոսական կազմի կողմից հրատարակվել է 34 գիտական հոդված, նրանք մասնակցել են հանրապետական 1 և միջազգային 6 գիտաժողովների։ Կիրառական արվեստի ֆակուլտետի դասախոսները մասնակցել են հանրապետական և միջազգային 23 ցուցահանդեսների։

Հաշվետու ժամանակահատվածում 2-րդ նպատակի իրականացման համար պլանավորված 11 գործողություններից 8-ի (**73%**) շրջանակներում մասնաճյուղն իրականացրել է համապատասխան գործընթացներ:

1. Իրականացնելով **2-րդ նպատակի 2.1 խնդրի** գործողությունները՝ կարևոր ձեռքբերում էր մասնաճյուղի գիտական խորհրդի 2019թ.-ի դեկտեմբերի 28-ի նիստում հաստատված «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման» կարգը, որով սահմանվել են աշխատողներին գիտահետազոտական, ուսումնամեթոդական, կազմակերպչական աշխատանքների որոշ տեսակների կատարման, այդ թվում նաև ՈՒԳԸ շրջանակներում ուսանողների գիտահետազոտական աշխատանքների ղեկավարման և կատարման համար վճարվող հաշվարկման և վճարման կարգն ու պայմանները (**ՌԾ, գործ. 2.1.1, 2.1.2, 2.1.3**): Կարգում առանձնահատուկ կարևորվում և բավականին բարձր գումարներով խրախուսվում են գիտական գործունեության արդյունքները: Նշեմ, որ համաձայն կարգի 2019թ. սեպտեմբերից մինչև 2020թ. սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում կատարված աշխատանքների համար աշխատակիցները ստացել են շուրջ կես միլիոն դրամի լրավճար:

2. Հետազոտությունների ծավալի մեծացման և հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և սովորողների ներգրավվածության ընդլայնման համար (**ՌԾ, գործ. 2.1.4**), հիմք ունենալով ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ հաստատված «ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման» կարգը, կրթական ծրագրերի ղեկավարներն իրենց աշխատանքային խմբերի հետ միասին 2020թ. մարտ-մայիս ամիսներին վերանայել են մասնաճյուղի գործող բոլոր կրթական ծրագրերը: Վերանայված կրթական ծրագրերը տեղադրված են մասնաճյուղի պաշտոնական կայքում:

3. Մասնաճյուղը վարում է պրոֆեսորադասախոսական կազմի ներգրավման ճկուն քաղաքականություն՝ մշտապես ունենալով Մայր բուհի աջակցությունը: Այստեղ երկար տարիներ կողք-կողքի նվիրումով աշխատում են Մայր բուհից հրավիրված բարձրա-կարգ դասախոսները: Մասնաճյուղը համագործակցում է նաև տարածաշրջանային և հանրապետական առաջատար բուհերի հետ՝ ուսումնառության կազմակերպման գործում ներգրավելով նրանց բարձրակարգ դասախոսական կազմին (**ՌԾ, գործ. 2.2.2**):

4. Մասնաճյուղի դասախոսական կազմի գիտահետազոտական, գիտակրթական և գիտամեթոդական գործունեության զարգացմանը, տարբեր ոլորտներում հետազոտական ծրագրերի մշակմանը, կազմակերպմանն ու իրականացմանն աջակցելու և այն ակտիվացնելու համար մասնաճյուղում 2020թ. հունիսից ստեղծվել է «Տավուշ» հետազոտական կենտրոնը (**ՌԾ, խնդիր 2.2**): Մշակվել են կենտրոնի գործունեությունը կարգավորող փաստաթղթային փաթեթը, դրամաշնորհների տրամադրման կարգը և մրցույթի հրավերի տեքստը, որն այսօրվա նիստով կքննարկվի:

5. Շարունակվում են հետևողական աշխատանքները մասնաճյուղի գիտական հոդվածների «Ակունք» ժողովածուի գործունեությունը ԲՈԿ-ի նոր պահանջներին համապատասխանեցնելու համար: «Ակունք» ժողովածուի գոյությունը խթանում, նաև ֆինանսապես աջակցում է մասնաճյուղի դասախոսների գիտական գործունեությանը, հետևաբար նրա վերահրատարակումը մասնաճյուղի ղեկավարության առաջնահերթ խնդիրներից է (**ՌԾ, գործ. 2.3.2**):

2-րդ նպատակի իրականացման շրջանակներում մասնաճյուղն ունի մի քանի **բացթողումներ**, որոնք հուսով ենք ապագայում կիրականացվեն «Տավուշ» հետազոտական կենտրոնի արդյունավետ գործունեությամբ: Այժմ.

- մասնաճյուղը չունի համագործակցային ծրագրեր գիտահետազոտական կենտրոնների հետ, արտասահմանյան գործընկերների հետ,
- մասնաճյուղը խնդիր ունի հետազոտական գործունեության միջազգայնացման հետ:

Ռազմավարական **3-րդ «Հանրային ներգրավում և ծառայություններ» նպատակի** իրականացման շրջանակներում մասնաճյուղը վարում է տեղեկատվության տարածման, գովազդային-լրատվական, քարոզչական համապատասխան քաղաքականություն: Հաշվետու ժամանակահատվածի համար պլանավորված այս նպատակի **11** գործողություններից **7-ի** (**64%-ի**) շրջանակներում մասնաճյուղն իրականացրել է մի շարք գործընթացներ:

1. Նշեմ, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գործընթացների և տարբեր իրադարձությունների, ուսանողական կյանքի վերաբերյալ տեղեկատվության հասանե-լիությանն աջակցում են անվճար ինտերնետ կապը, մասնաճյուղի պաշտոնական և էլեկտրոնային գրադարանի կայք-էջերը, Facebook սոցիալական ցանցում գործող մասնաճյուղի, նրա ստորաբաժանումների և ուսանողական կառույցների էջերը (**ՌԾ, խնդիր 3.1**):
2. Մասնաճյուղի պաշտոնական կայքը պարբերաբար վերակառուցվում է: Այն ծառայում է մասնաճյուղի ներքին և արտաքին շահակիցներին մասնաճյուղում ուսումնական գործընթացի կազմակերպման, մասնաճյուղի գործունեության, իրականացվող կրթական ծրագրերի վերաբերյալ թափանցիկ, ամբողջական և լիարժեք տեղեկատվություն տրամադրելուն: Նշեմ, որ ուսանողների շրջանում անցկացված «Մասնաճյուղից բավարարվածության» 2019թ.-ի առցանց հարցմաը մասնակցած առկա ուսուցման 1-3-րդ կուրսերի **275** ուսանողների **58%-ը** նշել է, որ բավարարված է տեղեկատվության ստացման հարմարավետությունից, **54.5%-ը՝** տեղեկատվության լիարժեքությունից, **58.8%-ը՝** նորությունների լուսաբանումից:

Իսկ նմանատիպ հարցմանը մասնակցած մասնաճյուղի **60** դասախոսների **65%-ը** նշել է, որ բավարարված է կայքից տեղեկատվության ստացման հարմարավետությունից, **67%-ը՝** տեղեկատվության լիարժեքությունից, **77%-ը՝** նորությունների լուսաբանումից:

3. Մասնաճյուղը կրթության, գիտության, մշակույթի, պատմական և ազգագրական գործունեության, երիտասարդական քաղաքականության մի շարք ուղղություններում հետևողական ընդլայնում է իր համագործակցությունների շրջանակը՝ մասնակից դառնալով տարածաշրջանային ծրագրերին և նախաձեռնություններին: 2019/20 ուստարում այդ համագործակցություններն ամրագրվել են 10 պայմանագրերով և հուշագրերով, իսկ նախկին կնքված պայմանագրերն արդյունավետ շարունակվել են (**ՌԾ, խնդիր 3.1.6**): Այդ թվում մասնաճյուղն ակտիվ համագործակցում է «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի, ՌԴ Գժելի պետական համալսարանի, «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակեր-պության, Եվրասիա համագործակցություն հիմնադրամի հյուսիսային մասնաճյուղի, Հայկական կարմիր խաչի ընկերության Տավուշի մարզային մասնաճյուղի, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի, «Իջևանի Բենտոնիտ կոմբինատ» ԲԲԸ-ի, Հայաստանի Առաքելական Սուրբ Եկեղեցու Տավուշի թեմի, Գյումրիում Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնի հետ:

Նշեմ նաև, որ հաշվետու ժամանակահատվածում ՀՕՖ-ի Մաթևոսյան կրթվճար ծրագրի շրջանակներում մասնաճյուղի 7 ուսանողների տրամադրվել է ուսման վճարի ամբողջական

փոխհատուցում, իսկ ՀՕՖ-ի Հինդլյան կրթավճար ծրագրով 14 ուսանողների տրամադրվել է ուսման վճարի ամբողջական և մասնակի փոխհատուցում: Մասնաճյուղը ներառված է նաև «Անուշ Մաթևոսյան կրթավճար» ծրագրում:

Այս նպատակի իրականացման շրջանակներում **չեն կատարվել** քայլեր **3.2 խնդրի**, այսինքն տարածաշրջանում լրացուցիչ կրթության հանրային պահանջարկի ուսումնա-սիրման և լրացուցիչ կրթական ծրագրերի ներդրման ուղղությամբ (**ՌԾ, խնդիր 3.2**):

Ռազմավարական **4-րդ՝ «Մարդկային որակյալ ռեսուրսներ»** նպատակի խնդիրներն են զարգացնել դասախոսական կազմի ներուժը, մարդկային ռեսուրսների կառավարման համակարգը և բարձրացնել աշխատողների բարեկեցության մակարդակը: Նախ նշեմ, որ մասնաճյուղում բարձրորակ և խորը մասնագիտական ուսումնառությունն ապահովում է նրա բարձրակարգ գիտամանկավարժական կազմը: Հաշվետու ուստարում մասնաճյուղում դասավանդել են հիմնական և համատեղությամբ 117 դասախոս, այդ թվում՝ 10 պրոֆեսոր (8,6%), 43 դոցենտ (36,8%), որոնցից գիտական աստիճանով՝ 8 դոկտոր և 62 թեկնածու. գիտական աստիճան ունեցող դասախոսների հաշվեկշիռը 59,9% է: Մասնաճյուղի կիրառական արվեստի ֆակուլտետում դասավանդում են ՀՀ նկարիչների միության 7 և դիզայներների միության 1 անդամ: Մասնաճյուղի դասախոսների միջին տարիքը 46 է:

Հաշվետու ժամանակահատվածում մասնաճյուղը նպատակային և տեսանելի գործընթացներ է իրականացրել 4-րդ նպատակի պլանավորված **14** գործողություններից **10-ի** (**71%-ի**) շրջանակներում: Նշեմ այս ուղղությամբ մասնաճյուղի հիմնական ձեռքբերումները.

1. Կարևոր ձեռքբերումներից է «Կրեդիտային համակարգով ԵՊՀ դասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի» 2016-2021թթ. շրջափուլի գործարկումը: Ծրագրի արդյունավետ և նպատակային իրականացման համար մասնաճյուղում 2020թ.-ի սեպտեմբերին ստեղծվել է Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժինը (**ՌԾ, գործ. 4.1.1**): Ծրագրի գրեթե բոլոր մոդուլներով հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են **8** դասընթացներ, իսկ համավարակի պայմաններում՝ առցանց: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել ուսուցման նորարարական մեթոդների և տեխնոլոգիաների մատուցմանը՝ հաշվի առնելով դրանց անհրաժեշտությունն ու պահանջվածությունը ուսումնառության կազմակերպման ստեղծված ոչ ստանդարտ իրավիճակում (**ՌԾ, գործ. 4.1.3**): Յուրաքանչյուր դասընթացին միջինում մասնակցել է 20-30 դասախոս:

2. Մասնաճյուղում 2017թ.-ի հոկտեմբերից գործում է գիտական խորհրդի կողմից հաստատված «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի պրոֆեսորա-դասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման» ընթացակարգը, որում սահմանված են դասախոսների պաշտոնների տեղակալման չափորոշիչները և գործընթացները, պրոֆեսորադասախոսական համակազմի պաշտոն-ների հավակնորդների մրցութային ընտրության անցկացման կարգը, պաշտոններում նշանակելու կարգը և ժամկետները (**ՌԾ, գործ. 4.1.2**): Մշակման փուլում է կրթական ծրագրերին համապատասխան դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների համակարգը (**ՌԾ, գործ. 4.1.4**):

3. Մասնաճյուղի բոլոր ջանքերն ուղղված են նաև ուսումնառությունից և մասնավո-րապես դասավանդող դասախոսական կազմի մանկավարժական և մասնագիտական կարողություններից ուսանողների բավարարվածության մակարդակի բարձրացմանը:

Դասախոսական կազմի դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողներն իրենց կարծիքներն արտահայտում են ԵՊՀ համապատասխան հարցման միջոցով: Նշենք, որ 2019/20 ուստարվա հարցումների արդյունքներով ուսանողները բավարարված են դասավանդողների մասնագիտական և մանկավարժական որակնե-րից (1-ին կիսամյակի միջին թվաբանական միավորը կազմել է 4.72, 2-րդ կիսամյակինը՝ 4.75) և այդ գնահատականները բարձր են նախորդ ուստարվա գնահատականներից:

4. Մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարման համար նպատակի **4.2.3 և 4.2.4 գործողությունների** իրականացման շրջանակներում մասնաճյուղում հաշվետու ուստարում գիտական խորհրդի նիստերում հաստատվել են 8 ստորաբաժանումների կանոնադրությունները, մշակվել և հաստատվել են մասնաճյուղի տարբեր ստորաբա-ժանումների աշխատողների պաշտոնի անձնագրեր, որոշները գտնվում հաստատման փուլում: Նշեմ, որ ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական և այլ տարակարգերի աշխատողների համար մշակվել են աշխատանքի նկարագրեր (**ՌԾ, գործ. 4.2.3, 4.2.4**):

5. ԱՕ-178 հոդվածի համաձայն վարչական աշխատողների լրացուցիչ ծանրա-բեռնվածության համար մշակվել են հավելավճարի հիմնական չափորոշիչները և համապատասխան կարգ (**ՌԾ, գործ. 4.3.1**):

6. Սոցիալական աջակցության ծրագրերի և **4.3.4 գործողության** շրջանակներում մասնաճյուղը 2020թ. մարտին «Նաիրի ինշուրանս» ապահովագրական ընկերության հետ կնքել է պայմանագիր, որի համաձայն մասնաճյուղի 151 հիմնական աշխատակիցներ մինչև 2020թ. տարեվերջ կարող էին օգտվել առողջության ապահովագրությունից (**ՌԾ, գործ. 4.3.4**): 2019/20 ուստարում տարբեր նպատակներով մասնաճյուղի արհբյուրոյի ֆինանսական միջոցներից աջակցություն են ստացել 24 աշխատակիցներ: Համավարակով պայմանավորված հաշվետու ուստարում Մայր բուհի սոցիալական աջակցության ծրագրերի շրջանակներում մասնաճյուղի աշխատակիցները չեն օգտվել ԵՊՀ հանգստյան և մարզաառողջարանային բազաներից (**ՌԾ, գործ. 4.3.5**):

Այս նպատակի գործողությունների շրջանակներում քննարկումների փուլում է վարչական, ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական տարակարգերի աշխատողների վերապատրաստման և ատեստավորման կարգ (**ՌԾ, գործ. 4.2.5**):

<u>Չի մշակվել</u> «Մարդկային ռեսուրսների կառավարման կարողությունների զարգացման» ծրագիր (**ՌԾ, գործ. 4.2.2**):

Անդրադարձ կատարելով ռազմավարական կարևոր **նպատակներից 5-րդին՝ «Որակյալ ենթակառուցվածքներ»**-ին, պետք է փաստել, որ այստեղ մասնաճյուղի ղեկավարությունը կատարում է նյութական և ֆինանսական ներդրումներ՝ կրթական ծրագրերի իրականացման պահանջներին բավարարող համալսարանական ենթակառուցվածքներ ձևավորելու համար: Հաշվետու ժամանակահատվածում այս նպատակի պլանավորված 9 գործողություններից **7-ի** (**78%-ի**) շրջանակներում իրականացվել են մի շարք գործընթացներ:

1. Մասնաճյուղն առանձնահատուկ ուշադիր է ուսումնական գործընթացի անխափան և հարմարավետ կազմակերպման նկատմամբ (**ՌԾ, խնդիր 5.1**): 2019/20 ուստարում նույնպես վերանորոգվել են լսարանները, լաբորատորիաները և արվեստա-նոցները, ձեռք է բերվել ուսումնական և մարզական անհրաժեշտ գույք, տեսահսկման սարքեր, ընդլայնվել է անվտանգության համակարգը, բարելավվել են 112 համակարգչի պարամատրերը, ինչի համար ձեռք են բերվել 886 հզ. դրամի սարքավորումներ, արագացվել է ինտերնետ կապը:

2. Նշենք, որ հաշվետու ուստարվա 2-րդ կիսամյակում ստեղծված համավարակա-յին պայմաններում մասնաճյուղն արագ անցել է առցանց ուսուցման կազմակերպմանը, այդ նպատակով Zoom հարթակում ստեղծվել են 55 հաշիվներ առկա ուսուցման բոլոր խմբերի և ենթախմբերի համար, որոնք հեռակա ուսուցման դասերի ընթացքում օգտագործվել են զուգահեռ:

3. Մասնաճյուղում տարեցտարի բարձրացվում է ներքին և արտաքին տեղեկա-տվական ռեսուրսների մատչելիությունը (**ՌԾ, գործ. 5.2.6, 5.2.7, 5.2.8**), որին աջակցում են անվճար ինտերնետ կապը, էլեկտրոնային ընթերցասրահը, էլեկտրոնային հարուստ պաշարները և մասնաճյուղի «Էլեկտրոնային գրադարան» կայքէջը: Մասնաճյուղի էլեկտրոնային գրադարանի կայքն իր այցելուներին տրամադրում է առավել քան 1000 էլեկտրոնային գրքեր: Այն ակտիվ համագործակցում է ԵՊՀ գիտական գրադարանի հետ, հաշվետու ուստարում գրադարանը համալրվել է շուրջ 300 միավոր գրականությամբ, այդ թվում կատարվել են որոշ քանակությամբ նվիրատվություններ: Նոր գրականության ձեռք բերման համար գրադարանում ներդրված է պահանջագրերի ինստիտուտը: Գրադարանում կազմակերպվում են հանդիպումներ, ազատ քննարկումներ, գրքերի շնորհանդեսներ, ցուցադրություններ և մշակութային տարբեր նախաձեռնություններ: Գրադարանում շարունակում է հաջողությամբ գործել «Հինգշաբթի» գրական ակումբը, որն իր շուրջն է համախմբում մասնաճյուղի ստեղծագործող և ընթերցասեր ուսանողությանը: Իսկ գրադարանի վարիչը պարբերաբար մասնակցում է Հայաստանյան նորարար գրադարանների աշխատաժողովներին:

Չնայած մասնաճյուղի գրադարանային պաշարները մշտապես համալրվում են ժամանակակից մասնագիտական գրականությամբ, պարտադիր թվայնացվում և տրամադրվում են ուսանողներին, այնուամենայնիվ, նախորդ տարիների տարբեր ուսումնասիրությունների արդյունքներով ուսանողները մշտապես բավարարված չեն եղել գրադարանում առկա մասնագիտական գրականության որակից և քանակից: Նմանատիպ արդյունքներ գրանցվել են նաև 2019-20 ուստարում: Առցանց ուսումնառու-թյան պայմաններում, ակնհայտ է, առավել կարևորվում են գրադարանի էլեկտրոնային պաշարները: Մասնաճյուղում <u>առցանց կրթության</u> վերաբերյալ 2019-20 ուստարվա ուսանողական առցանց հարցմանը մասնակցած 285 ուսանողների **39%-ը** նշել է, որ հիմնականում բավարարված է էլեկտրոնային գրադարանի պաշարներից, **42,7%-ը**՝ բավարարված է մասամբ, իսկ **18,1%-ին**՝ գրադարանի պաշարները չեն բավարարել:

Նմանատիպ հարցմանը մասնակցած մասնաճյուղի 93 դասախոսների **46,2%-ը** նշել են, որ մասնաճյուղի էլեկտրոնային գրադարանի պաշարներն առցանց ուսուցման պայմաններում մասամբ են բավարարում, իսկ **11,8%**-ը գտել են, որ չեն բավարարում:

<u>**Չի ստեղծվել**</u> «սովորող-համալսարան» վիրտուալ տիրույթը:

Ռազմավարական **6-րդ «Որակյալ ծառայություններ» նպատակի** գործողություններն ուղղված են եղել ուսանողական օժանդակ ծառայությունները զարգացնելուն, ուսանողական կազմակերպությունների աշխատանքները խթանելուն: Այս ուղղությամբ գործընթացներ են իրականացվել հաշվետու ժամանակահատվածի համար պլանավորված **14** գործողություններից **9-ի** (**64%-ի**) շրջանակներում:

Նախ նշեմ, որ 2019/20 ուստարում մասնաճյուղում բակալավրի կրթական ծրագրերով առկա և հեռակա ուսուցման համակարգերում ուսանել են 1307 ուսանող (նախորդ ուստարում՝ 1355): Նրանցից 1156-ը սովորել է վճարովի համակարգում, իսկ 118 ուսանող օգտվել է

պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցման (ուսանողական նպաստի ձևով) իրավունքից։ 110 ուսանողների հատկացվել են պետական և ներբուհական կրթաթոշակներ, որոնցից 7 ուսանող ստացել է անվանական կրթաթոշակ։ 2019/20 ուստարում ուսման վարձի մասնակի փոխհատուցումից օգտվել է 250 ուսանող, այդ թվում՝ 76-ը առկա ուսուցման համակարգում։

2019/20 ուստարում երկլեզու (հայերեն և անգլերեն) հավելվածով դիպլոմներ են հանձնվել մասնաճյուղի 348 շրջանավարտի, այդ թվում 166-ը՝ առկա ուսուցմամբ։ Գերազանցության դիպլոմ է ստացել առկա ուսուցմամբ 26 շրջանավարտ։

Հաշվետու ուստարում մասնաճյուղը ձեռքբերումներ ունի նաև իրականացվող ծառայությունների գծով։

1. Հաշվետու ուստարում 5 կրթական ծրագրերով մասնաճյուղում իրականացվել են մանկավարժի որակավորման լրացուցիչ դասընթացներ, որին մասնակցել են 1-ից 4-րդ կուրսերի 101 ուսանողներ, նրանցից 32-ը հաջողությամբ ավարտել են և ստացել մանկավարժի որակավորում (**ՌԾ, գործ. 6.1.2**)։

2. Մասնաճյուղի շրջանավարտների ապագա գործունեությունը, նրանց հաջողությունները, մշտապես գտնվում են մասնաճյուղի ուշադրության կենտրոնում։ Մասնաճյուղը վարում է շրջանավարտների տվյալների բազա, որում կարևորվում է նրանց զբաղվածությունը, առավել ևս նրանց մասնագիտական գործունեությունը։ Բազան օգնում է մասնաճյուղին արտաքին շահակիցների հետ համագործակցության շրջանակներում աջակցել շրջանավարտներին ապագա կարիերայի հարցում։ Միայն 2019/20 ուստարում արտաքին կապերի բաժինը շրջանավարտներին տրամադրել է տեղեկատվություն 62 թափուր հաստիքների մասին։ Դրանցից 43-ը հաստիքներ են դպրոցների «Արմաթ» ինժեներական լաբորատորիաներում, 19-ը՝ բանկերում, ապահո-վագրական ընկերություններում, հյուրատներում, գովազդային գործակալությունում, հաշվապահական գրասենյակում և այլն։ Արտաքին շահակիցների հետ համագոր-ծակցության շնորհիվ 23 շրջանավարտներ հաջողությամբ հաղթահարել են մրցույթները և ընդունվել աշխատանքի։ Հարկ է նշել, որ երկրի տնտեսության համար ծանր համավարակային պայմաններում մասնաճյուղը հեռավար շարունակել է համագործակցությունն իր շահակիցների հետ (**ՌԾ, խնդիր 6.1**)։

3. 2019/20 ուստարում արտաքին կապերի բաժնի նախաձեռնությամբ իրականաց-վել են մի շարք համագործակցային ծրագրեր՝ շուրջ երկու տասնյակ դասընթացներ, հանդիպումներ, քննարկումներ, այցելություններ, որոնց նպատակն է եղել ուսանող-ներին ներգրավել մարզի հիմնախնդիրների, ուսանողների կարիքների, սոցիալական և տնտեսական խնդիրների ուսումնասիրմանը, հնարավորության դեպքում դրանց լուծմանը։ Բաժինն ակտիվ համագործակցում է Տավուշի թեմի առաջնորդարանի հետ, որի աջակցությամբ և «Մաշտոց» հիմնադրամի ֆինանսավորմամբ մասնաճյուղի 25 ուսանողների համար կատարվել է 100 հզ. դրամի չափով ուսման վարձի փոխհատու-ցում։ Կազմակերպվել է հանդիպում մասնաճյուղի հաջողակ շրջանավարտների հետ։ «Հեռանկարներ և նոր հնարավորություններ» ծրագրի շրջանակներում մասնաճյուղի 20 ուսանողներ հյուրընկալվել են Մայր բուհում։ Իջևանի քաղաքապետարանում մասնաճյուղի «Քարտեզագրություն և կադաստրային գործ» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողները մասնակցել են «Իջևան համայնքի մունիցիպալ կառավարման տեղեկատվական համակարգը ԱՏՀ հիմքով» ծրագրին (**ՌԾ, գործ. 6.1.6, 6.2.2**)։

4. Մասնաճյուղի ռազմավարական կարևոր խնդիրներից է արդյունավետ և նպատակային <u>պրակտիկաների</u> իրականացումը։ Մասնաճյուղում պարբերաբար վերանայվում են

պրակտիկաների իրականացման ծրագրերը՝ դրանց առավելագույն չափով կրթական ծրագրերի վերջնարդյունքներին ուղղորդելու, ուսանողների գործնական հմտությունների, մասնագիտական, ստեղծագործական և հետազոտական կարողությունների ձևավորմանը նպաստելու և նաև կուրսային և ավարտական աշխատանքների, այժմ նաև հետազոտական աշխատանքների կատարմանն արդյունավետ աջակցելու համար: Համավարակի պայմաններում 2019/20 ուստարվա երկրորդ կիսամյակի պրակտիկաների մի մասն իրակա-նացվել է առցանց եղանակով՝ առաջ բերելով ևս մեկ անգամ ծրագրերը վերանայելու անհրաժեշտություն: 2019/20 ուստարում պրակտիկաների կազմակերպման համար մասնաճյուղը պետական և ոչ պետական տարբեր կազմակերպությունների և հիմնարկ-ձեռնարկությունների հետ ունեցել է ուսումնական, արտադրական և մանկավարժական պրակ-տիկաների իրականացման 34 պայմանագրեր, որոնցից 3-ը ձեռք են բերվել հաշվետու ուստարում (Իջևանի Ս.Սարգսյանի անվան թիվ 1 և Մ.Մարտիրոսյանի անվան թիվ 5 հիմնական դպրոցներ՝ մանկավարժական պրակտիկայի համար, «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ՝ արտադրական պրակտիկայի համար): Այդ պրակտիկաների արդյունավետ իրականացման համար մասնաճյուղը հատկացրել է շուրջ 668 հզ. դրամի ֆինանսական ռեսուրսներ:

5. Մասնաճյուղը մշտապես աջակցել է ուսանողական կառույցներին՝ ուսանողական գիտական ընկերությանը (ՈԻԳԸ) և ուսանողական խորհրդին (ՈԻԽ) իրենց բոլոր նախաձեռնություններում (**ՌԾ, գործ. 6.2.3**):

Հաշվետու ուստարում ՈԻԳԸ-ի նախաձեռնությամբ կազմակերպվել է մասնաճյուղի 25-ամյակին նվիրված «Անկախության առաջնեկը» հանրապետական գիտաժողովը, որին մասնակցել են ՀՀ 25 բուհերի 38 ուսանողներ (նրանց զեկուցումները տպագրվել են «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուի հերթական համարում), կազմակերպվել են սեմինար քննարկումներ, որին մասնակցել և ուսանողներին հետաքրքրող հարցերին պատասխանել են ոլորտի փորձագետներ: Մասնակցել և հաղթել են ՀՊՄՀ-ի ՈԻԽ-ի հիմնադրման 25-ամյակին նվիրված «12-ամյա կրթական համակարգն ապահովում է բարձրորակ կրթություն ՀՀ-ում» թեմայով բանավեճ-խաղում և ինտելեկտուալ խաղում: Պարբերաբար կազմակերպվել են «Ամենախելացին» ինտելեկտուալ խաղը՝ նաև առցանց տարբերակով, կանանց և տղմարդկանց շախմատի մասնաճյուղային առաջնություններ, կինոդիտումներ, մրցույթներ, խաղարկություններ և այլն (**ՌԾ, գործ. 6.2.3, 6.2.4**):

6. Մասնաճյուղի ուսանողական խորհուրդը պաշտպանում, հետևողականորեն բարձրաձայնում և լուծում է ուսանողների ուսումնական կարիքները: Նա իր ներկայացուցիչներն ունի մասնաճյուղի կառավարման բոլոր օղակներում և հարկ է նշել, որ նրանք ակտիվ մասնակցում են մասնաճյուղի ռազմավարական գործունեության իրականացման բոլոր ծրագրերին, իրենց միջոցառումներով ապահովում են մասնաճյուղի ուսանողների մշակութային և ուսումնական առօրյան (**ՌԾ, գործ. 6.1.4, 6.2.3**):

Հարկ է նշել, որ մասնաճյուղի ուսանողները բավականին հաջող մասնակցում են ԱՄՆ խաղաղության կորպուսի կողմից կազմակերպվող “Write On! Competition 2020” էսսեների միջազգային մրցույթին: 2019/20 ուստարում նույնպես «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության ուսանողները մասնակցել են մրցույթին և մի քանի ուսանողներ զբաղեցրել են առաջին տեղեր: Իսկ «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի մեր ուսանողը ՀՀ պետական բուհերի 14 լավագույն ուսանողների հետ 2020թ. փետրվարին այցելել է Արաբական միացյալ Էմիրությունների մայրաքաղաք Աբու Դաբիի լավագույն համալսարաններից մեկը՝ Գիտության և տեխնոլոգիայի Խալիֆա համալսարան:

5. Համավարակի հետևանքով մասնաճյուղում հաշվետու ուստարվա 2-րդ կիսամյակի դասընթացները հիմնականում իրականացվել են առցանց: Այդ իրավիճակով պայմանավորված մասնաճյուղում առաջին անգամ ուսանողների և դասախոսների շրջանում իրականացվել է ուսումնասիրություն առցանց կրթության տված հնարավորությունների և խնդիրների վերաբերյալ: Հարցումն անց է կացվել 2020թ. մայիս, հունիս ամիսներին, որին մասնակցել է մասնաճյուղի առկա ուսուցման 1-ից 3-րդ կուրսերի 289-ը (80%) և 10 ամբիոնների 93 դասախոս (63%-ը): Հարցման արդյունքները վկայել են, որ մասնաճյուղում հաջողվել է արդյունավետ իրականցնել առցանց ուսուցում, ապահովել գիտելիքի և մասնագիտական կարողությունների փոխանցում, ուսանողի ձեռքբերումների գնահատում և այլն: Հարցմանը մասնակցած բոլոր դասախոսները և ուսանողների գերակշիռ մասը՝ 84,4%-ը փաստել են, որ բավարարված են մասնաճյուղում առցանց ուսուցման կազմակերպումից (**ՌԾ, գործ. 6.1.1**):

6-րդ նպատակի իրականացման շրջանակներում մասնաճյուղը **չի իրականացրել** գործողություններ հատուկ կարիք ունեցող ուսանողներին մատուցվող ծառայությունների ուղղությամբ:

Ռազմավարական ծրագրի **7-րդ «Ընդունելության բազմազանեցում և համապատասխանություն» նպատակն ակնկալում է** զարգացնել ընդունելության մարքեթինգային գործընթացները, օպտիմալացնել ընդունելությունը և վարել այն տարածաշրջանի զարգացմանը և աշխատաշուկայի պահանջներին համապատասխա-նեցնելու քաղաքականություն: Այստեղ կարևորվել են դպրոցներում շրջանավարտների հետ տարվող մասնագիտական կողմնորոշման գործընթացները: Այս նպատակի իրականացման համար պլանավորված **14** գործություններից **9-ը** (**64%-ը**) կատարվել են:

Հաշվետու ուստարում գրանցվել է դիմորդների թվի աճ. մասնաճյուղի բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցմամբ 12 մասնագիտությունների 13 կրթական ծրագրերով ընդունվել է 166 դիմորդ (նախորդ ուստարվա 76-ի փոխարեն), այդ թվում՝ 35-ը անվճար, 131-ը վճարովի, իսկ հեռակա ուսուցմամբ 8 կրթական ծրագրերով՝ 52 դիմորդ (նախորդ ուստարվա 40-ի փոխարեն): 38 դիմորդից 25-ը ընդունվել են մասնաճյուղի վերաբացված մագիստրատուրա:

1. Մասնաճյուղի դիմորդների շուրջ 97%-ը (336 դիմորդից 326-ը) Տավուշի մարզի դպրոցների շրջանավարտներն են: Ռազմավարական **7.1.5 և 7.1.7 գործողություններով** պայմանավորված և ընդունելության համակազմի պահպանման և ընդլայնման համար Մասնաճյուղը մշտապես ակտիվ համագործակցում է մարզի միջնակարգ և ավագ դպրոցների հետ: Պարբերաբար կազմակերպվում են այցելություններ ինչպես Տավուշի մարզի, այնպես էլ Գեղարքունիքի և Լոռու մարզերի դպրոցներ: Մասնաճյուղի ղեկավա-րության և պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները դաս-քննարկումներ են անցկացնում ավարտական դասարանների աշակերտների հետ, ներկայացնում են մասնաճյուղն ու իրականացվող կրթական ծրագրերը, մասնաճյուղի գիտական և ուսումնական առօրյան, նրա ձեռքբերումներն ու հեռանակարները:

2. Պարբերաբար մարզի բարձր դասարանների աշակերտներն այցելում են մասնաճյուղ, ծանոթանում նրա առօրյային, մասնակցում իրենց հետաքրքրող դասերին: Կատարվում են փոխադարձ այցելություններ, աշակերտների համար գործում են «Բաց դռներ»-ի օրեր, իրականացվում են բաց դասեր և օլիմպիադաներ: Ցավոք պետք է նշել, որ այս կայացած գործընթացը մասնաճյուղը կարողացավ արդյունավետ իրականացնել միայն ուսումնական

տարվա 1-ին կիսամյակում՝ այցելելով Տավուշի մարզի 41 հանրակրթական դպրոցներ (**ՌԾ, գործ. 7.1.4**):

3. Գործող մասնագիտությունների վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունն ապահովվում է տպագիր տարբեր գովազդային նյութերի միջոցով: Միայն հաշվետու ուստարում հանդիպումների ժամանակ դպրոցներին տրամադրվել են մասնաճյուղի վերաբերյալ 115 գովազդային պաստառներ, աշակերտներին տրամադրվել են 2020/21 ուստարվա ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ընդունելության մասնագիտությունների և քննությունների ցանկը (**ՌԾ, գործ. 7.1.5**):

4. Մասնաճյուղն ակտիվորեն համագործակցում է մարզի բոլոր ավագ դպրոցների և քոլեջների հետ: 2020թ. հունվարին համագործակցության հուշագիր է ստորագրվել «Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի միջև մարզի զբոսաշրջու-թյան, ՏՏ, ճշգրիտ ճարտարագիտության և գյուղատնտեսության ոլորտների մասնա-գետներ պատրաստելու և քոլեջի շրջանավարտներին շարունակական կրթության և աշխատանքի տեղավորման հարցերում աջակցելու համար (**ՌԾ, գործ. 7.1.6**): Միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների հետ մասնաճյուղի ակտիվ համագործակցության շրջանակներում նրանց 17 շրջանավարտներ ընթացիկ ուստարում իրենց կրթությունը շարունակել են մասնաճյուղում՝ 7 մասնա-գիտությունների գծով:

5. Դիմորդների մասնագիտական կողմնորոշմանն աջակցում է նաև մասնաճյուղի կայքը: Այն ունի դիմորդի բաժին, որտեղ տեղադրված է տեղեկատվություն ընդունելության մասնագիտությունների, վարձավճարների չափի, անհրաժեշտ փաստթղթերի մասին, տեղադրված են նաև տարբեր լեզուներով պատրաստված մասնաճյուղի գովազդային բուկլետները (**ՌԾ, գործ. 7.1.2**) :

6. Մասնաճյուղը պարբերաբար ուսումնասիրում է տարածաշրջանի աշխատա-շուկան և վերլուծելով դիմորդների հոսքն ու այդ ոլորտներում առկա խնդիրները մշտապես վերանայում է մասնաճյուղում իրականացվող կրթական ծրագրերի ցանկը: Դրա ապացույցն են 3 նոր կրթական ծրագրերը («Հոգեբանություն», «Ռուսաց լեզու և գրականություն», «Դեկորատիվ կիրառական արվեստ»), որոնցով ուսումնառությունն սկսվել է իրականացվել 2019/20 ուստարում: Հաշվետու ուստարում մասնաճյուղի կարևոր ձեքբերումը նաև հեռակա ուսուցմամբ մագիստրոսական «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրով 2020/21 ուստարուց կրթություն իրականացնելու թույլտվությունն էր լիցենզավորման վարչության կողմից: 2019/20 ուստարում սկսվել են նաև «Տնտեսական քաղաքականություն և իրավունք» առկա մագիստրոսական կրթական ծրագրի և «Մեխատրոնիկա և ռոբոտոտեխնիկա» առկա բակալավրական կրթական ծրագրի փաստաթղթերի պատրաստման և լիցենզավորման գործընթացները (**ՌԾ, գործ. 7.2.1, 7.2.2**) :

Այս նպատակի իրականացման շրջանակներում մասնաճյուղը **<u>խնդիր ունի</u>** օտարերկրյա դիմորդների հավաքագրման գործընթացի կազմակերպման հետ (**ՌԾ, խնդիր 7.3**): Առայժմ մասնաճյուղը օտարերկրյա դիմորդներ չունի:

Անդրադառնալով ռազմավարական **8-րդ «Ֆինանսական կայունություն, արդյունավետ կառավարում» նպատակին նշեմ, որ** այս նպատակի 21 գործողությունների իրականացումը մասնաճյուղի համար պետք է ապահովի ֆինանսների կայուն և բազմազանեցված ներհոսք, կատարելագործի իրավական դաշտը և կառավարման համակարգը: Նշեմ, որ պլանավորված **21**

գործողություններից **18-ի** (**86%-ի**) շրջանակներում իրականացվել են բավականին գործընթացներ։

1. Մասնաճյուղը վարում է կայուն ֆինանսական և ռեսուրսախնայողության քաղաքականություն, աշխատավարձերը վճարվում են առանց ուշացումների, առցանց ուսումնառությունն իր հերթին ապահովել է որոշակի խնայողություն (**ՌԾ, գործ. 8.2.2**)։

2. Ֆինանսների հոսքեր ապահովվել է 2019 թվականին ներդրված ավանդների գծով՝ այն ավելացնելով 270 մլն-ով։ Որոշ հոսքեր եղել են բարելավված տպագրական աշխատանքներից (505 հզ.դրամ) (**ՌԾ, գործ. 8.1.3**)։

3. Հաշվետու ժամանակահատվածում մասնաճյուղում կատարվել է կազմակեր-պական կառուցվածքի փոփոխություն (ստեղծվել է կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժինը, «Տավուշ» հետազոտական կենտրոնը), վերանայվել է հաստիքացուցակը (**ՌԾ, գործ. 8.3.1**)։

4. Համալսարանական գործընթացների թափանցիկության և կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու համար մշակվել են «Էթիկայի կանոնագիրք» և նոր «Երևանի պետական համալսարան›› հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի հակակոռուպցիոն ծրագիր»-ը (**ՌԾ, գործ. 8.4.1, 8.4.2**)։

Մեր ձեռքբերումներից են 2 միջազգային դրամաշնորհային ծրագրերի մասնաճյուղի մասնակցությունը 2020թ.

- «Նորարարական տուրիզմի և տեխնոլոգիաների զարգացում Հայաստանի համար» Եվրոմիության երկամյա ծրագիրը, որը ֆինանսավորվում է Գերմանական Դաշնության GIZ կազմակերպության կողմից և իրականացվում է «Տավուշի տուրիզմի զարգացման գործակալության» հետ համատեղ,
- «EU4Youth – Սոցիալական ձեռներեցության էկոհամակարգի զարգացում՝ սահմանային գյուղերում կանաչ առաջընթացի համար» Եվրոմիության կողմից ֆինանսավորվող եռամյա ծրագիրը, որի շրջանակներում մասնաճյուղում կստեղծվի Գյուղական Նորարարական Գիտելիքի Հանգույց (Հաբ)։

Այս նպատակի իրականացման շրջանակներում մասնաճյուղն **ունի մի շարք բացթողումներ** կապված պետական ֆինանսավորման ծավալների նվազման հետ, ԵՊՀ գիտակրթական ծրագրերին, շրջանավարտների հետ համագործակցության շրջանակներում դեռևս չունենք ֆինսական կամ նյութական աջակցության ծրագրեր (**ՌԾ, գործ. 8.1.1, 8.1.2, 8.1.4**)։

Ֆինանսական կայուն մուտքեր ապահովելու համար պետք է մշակել և իրականացնել տարբեր բիզնես ծրագրեր, կազմակերպել բազմազան լրացուցիչ վճարովի ծառայություններ՝ այս ուղղությամբ առաջընթացի ակնկալիքներ ունենք հիմնադրվող Նորարարական Գիտելիքի Հանգույցի աշխատանքից (**ՌԾ, գործ. 8.1.5**)։

Անդրադարձ չի կատարվել ԵՊՀ ԻՄ-ում ներքին աուդիտի համակարգին և նրա իրականացմանը (**ՌԾ, գործ. 8.3.4**)։

Եվ վերջին՝ **9-րդ «Միջազգայնացում և գործակցություն»** նպատակի իրականացումը մասնաճյուղի ամենադժվար խնդիրներից է։ Այս նպատակի **11** գործողություններից մասամբ իրականացվել են **4-ը (36%)**։ Այսինքն, խնդիր ունենք ապահովելու մասնաճյուղի միջազգայնացումը ինստիտուցիոնալ և ծրագրային մակարդակներում։

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են մասնաճյուղի միջազգայնացմանը նպաստող որոշ գործընթացներ։

1. Մասնաճյուղի կայքէջը գործում է եռալեզու տարբերակով (ոչ ամբողջությամբ)։

2. Իրականացվել են դասախոսների օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացման դասընթացներ. ուսանողների համար գործում են անգլերենի և ֆրանսերենի ուսուցման կենտրոնները, «Ռուսաց լեզվի և մշակույթի կենտրոնը»։

3. 2020թ. փետրվարին մասնաճյուղը համագործակցության պայմանագիր է կնքել «Փրոջեքթ հարմոնի» հայկական մասնաճյուղի հետ, որի շնորհիվ մասնաճյուղում ստեղծվել է **«Ամերիկյան գրադարան և դասընթացի կենտրոն»**, որում հաշվետու ուստարում կազմակերպվել են անգլերեն լեզվի և այլ դասընթացներ պատանիների, երիտասարդների և դասախոսների համար։

4. «Ֆինանսներ» կրթական ծրագրում շարունակվել է իրականացվել կամընտրական մեկ օտարալեզու մոդուլ (գործավարություն՝ ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն),

5. Մասնաճյուղն ակտիվ համագործակցում է Ֆրանսիայի Վալանս քաղաքի Մաեստրիս համալսարանի հետ՝ ուսանողների փոխանակության ծրագրի շրջանակներում։ Հաշվետու ուստարում համավարակի հետևանքով չի կայացել մասնաճյուղի ուսանողների ամենամյա այցը համալսարան։

6. Մասնաճյուղը համագործակցում է նաև «Ֆրանս-հայկական ասոցիացիայի» հետ՝ ուսանողական կրթաթոշակների ուղղությամբ. կրթաթոշակներ են հանձնվել «Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի ընտրված ուսանողներին։

Պետք է փաստել, որ բուհի միջազգայնացման համար անհրաժեշտ են ավելի արդյունավետ և ակտիվ գործողություններ։

Մեր մոտակա գործողությունները պետք է ուղղված լինեն 2016-20թ. ռազմավարական պլանի նպատակների և խնդիրները չիրականացման պատճառների խորը վերլուծությանը, նոր և ավելի իրատեսական նպատակների և մոտակա խնդիրների սահմանմանը։